ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղար Արա Սուքիասյանը:

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է Արթիկ համայնքի ղեկավար՝ Անանիկ Ոսկանյանը:

Նիստին ներկա էին ավագանու 14 /տասնչորս/ անդամներ, բացակայում էին ավագանու 13 /տասներեք/ անդամներ:

Նիստին մասնակցում են Արթիկ համայնքի ավագանու 14 /տասնչորս/ անդամներ՝ Անանիկ Ոսկանյանը, Գայանե Սալնազարյանը, Էմիլ Գևորգյանը, Վարդուհի Հովհաննիսյանը, Մանուկ Գևորգյանը, Աստղիկ Պետրոսյանը, Արման Տոնոյանը, Հովհաննես Սահակյանը, Լիլիթ Հաջաթյանը, Գայանե Մինասյանը, Արտակ Ռափյանը, Մուշեղ Մկրտչյանը, Արթուր Աստոյանը, Ժաննա Ասատրյանը:

Նիստին ներկա էին համայնքի ղեկավարի տեղակալներ Վարդան Մակեյանը և Արման Աջամօղլյանը, աշխատակազմի քարտուղար Արա Սուքիասյանը, համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Սևակ Պետոյանը, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Էմմա Յայլոյանը, աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Արկադի Թադևոսյանը և այլ աշխատակիցներ:

Նիստի օրակարգ ներկայացնելուց հետո հետևյալ օրակարգը դրվեց քվեարկության և հաստատվեց:

ՕՐԱԿԱՐԳ

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու կարգը հաստատելու մասին:

/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեի հանգստի և սպորտի ծառայություններ բաժնում նախատեսված գումարից հատկացում կատարելու մասին:

/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

Ավագանու անդամներ՝

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ

Գայանե Սալնազարյան

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Գևորգյան Մանուկ

Պետրոսյան Աստղիկ

Տոնոյան Արման

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Մինասյան Գայանե

Ռափյան Արտակ

Մկրտչյան Մուշեղ

Աստոյան Արթուր

Ասատրյան Ժաննա

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության բաժնի պետ Մարինե Թադևոսյանը: Նա ներկայացրեց որոշման նախագիծ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու կարգը հաստատելու մասին: Մ.Թադևոսյանը պարզաբանում ներկայացնելով ավագանու անդամներ Ա.Տոնոյանի, Ա.Ռափյանի հարցերին նշեց, որ ավագանու կողմից նախկինում հաստատվել են ըստ կատեգորիաների արտոնություններ ունեցող քաղաքացիների ցանկը, որոնք ունեն 100% զեղչերից օգտվելու, ինչպես նաև 50% զեղչերից օգտվելու իրավունք: Ներկայումս պետք է հաստատվի յուրաքանչյուր բնակչի համար արտոնությունից օգտվելու կարգը: Միաժամանակ համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվում նաև

ա/ արտոնության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը

բ/ արտոնությունից օգտվելու համար դիմելու կարգը

Քննարկումից հետո Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու կարգը դրվեց քվեարկության և ընդունվեց ՝ կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

Ավագանու անդամներ՝

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ

Գայանե Սալնազարյան

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Գևորգյան Մանուկ

Պետրոսյան Աստղիկ

Տոնոյան Արման

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Մինասյան Գայանե

Ռափյան Արտակ

Մկրտչյան Մուշեղ

Աստոյան Արթուր

Ասատրյան Ժաննա

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Է.Յայլոյանը: Նա ներկայացրեց որոշման նախագիծ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեի հանգստի և սպորտի ծառայություններ բաժնում նախատեսված գումարից հատկացում կատարելու մասին: Պարզաբանում ներկայացնելով ավագանու անդամների հարցերին Է.Յայլոյանը նշեց, որ խոսքը Եվրոպայի, ԱՊՀ-ի երկրների սպորտային մրցումների և մի շարք այլ առաջնություններում աչքի ընկած, մարզական բարձր տեղեր գրաված Արթիկ համայնքի մարզադպրոցների թվով 6 սաների՝պարգևատրման նպատակով յուրաքանչյուրին 50.000 ՀՀ դրամի չափով գումար հատկացնելու մասին է, որի արդյունքում անհրաժեշտ է Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեի «Հանգստի և սպորտի ծառայություններ» բաժնում նախատեսված գումարից կատարել հատկացում՝ ընդամենը 300000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սաներին՝ համաձայն ներկայացված հավելվածի: Քննարկումից հետո հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

Ավագանու անդամներ՝

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ

Գայանե Սալնազարյան

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Գևորգյան Մանուկ

Պետրոսյան Աստղիկ

Տոնոյան Արման

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Մինասյան Գայանե

Ռափյան Արտակ

Մկրտչյան Մուշեղ

Աստոյան Արթուր

Ասատրյան Ժաննա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք

11 օգոստոս 2023 թվական